Փափաղարութիւնը կը հնչեն ամէն նստարանէ, և հայ ճարտարապետներն կ'երթան ընդունելու պատկները, զորս Քաղաքապետին փոխանորդը Մխիթարեանց Աբրահոր կը յանձնէ նէ նուիրելու Պսակաւորաց։ Հաւիւ տեղերնին գնացած, և ահա կը լսուի դարձեալ.

ՄՐՑԱՆԱԿ ԳՈՐՈՆԻՆԻ ԹՈՄԱԶՕ

Պ. ԻՍԱՀԱԿ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Եւ Պ. Իսահակ Գարագաշեան կ'երթայ կորզելու և այդ մրցանակը։

Արդէն ամէն հանդիսատես ոտքի ելած է տեսնելու այդ յանդուգն հայ երիտասարդը, որ Պօլսէն գալով հանճարեղ Իտալացւոց ձեռքէն կը շորթէ այդ մրցանակն ալ։

Ցեռ մի քանի ուրիշ անուանց՝ կը լսուի.

ՄԱՍՆԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ ԱՐՁԱՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

Ա ՏԱՐԻ

Երկրորդ մրցանակ արծաթ միտալով } Պ. Ցակոբ Փափազեան[1], Պրուսացի։

Առաջին մրցանակ չի կայ. եթէ ըլլար՝ անշուտ նոյն հանճարեղ երիտասարդը պիտի կորզէր։ Դարձեալ կը լսուի.

ՄԱՍՆԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Ա ՏԱՐԻ

Երկրորդ մրցանակ արծաթ միտալով } Պ. Եդուարդ Թերզեան, Կ. պօլսեցի։

Հոս եւս առաջին մրցանակ չկայ. իր ընկերն ալ երկրորդ մրցանակ կ'առնուլ։

Ծափերուն աղմուկը նուազանմբին զբաղթի շեշտերուն հետ կը խառնուի, և հանդիսականք կը սկսին շարժիլ՝ ըստ սովորութեան՝ դէպ ի Ակադեմիային սրահները, այցելելու անգամ մ'ալ անմահանուն հեղինակաց նկարները. մենք ևս, երթանք, ընկերակիցք իմ, այս գեղեցիկ տեսիլը ձեռքէ չփախցընենք։ Ցետնենք անգամ մ'ալ 400 գլուխ գործոցները որ կան հոն, զանոնք մի առ մի դիտելը ուրիշ ժամանակի թողլով, վասնզի ժամը երեքին կը մօտենայ։

Կ'անցնի թափօրը սքանչելի սրահներէն, իտալական հրաշակերտներուն վրայ զմայլելով, և կ'ելլէնք աշակերտաց գեղարուեստից սրահը՝ ուր գրուած են գատ գատ անոնց գծագրութիւնները։ Մեզի հետ են բոլոր Բրոֆեսորները և կը բացատրեն մեզ իւրաքանչիւր նկարի գնահատելի կողմերը։ Ամանէին սենեկի մէջ զետեղուած են հայ աշակերտաց գծագրութիւնները, և իւրաքանչիւրին տակ կը փայլին Գարագաշեան, Ղուկեան, Թերզեան, անունները, և ընդունած մրցանակներին։ Պահ մը կը հիանանք հայ ձեռաց և մատանց նրբին ճարտարութեան վրայ, ուստի կ'անցնինք Արձանագործութեան սրահը, ուր գրուած են փափազեանի ձեռագործ արձանները և շարպարութիւնները։ Արդէն ժամը երեքն է, շնորհակալութեան սիրալիր ողջոյններ մատուցանելով Քաղաքապետին փոխանորդին և Բրոֆեսորներուն կը մեկնինք։

Ձեզ ևս, ազնիւ ընթերցողք, որ համեցաք ընկերել հետս՝ եթէ մնօք և եթէ երեւակայութեամբ, և յուսամ որ զոհ մնացիք, վերջին ողջոյնս կու տամ, խոստանալով ուրիշ անգամներ ևս չզրկել զձեզ այսպիսի հաճելիներէ, ուր հայ տարրը՝ իւր ճկուն հանճարոյն մտգական կարողութիւնը կը հանդիսացընէ։

ԱԿԱՆԱՏԵՍ ՄԸ

ԱԶԴ

Բազմավիպի ընթերցողք ոչ սակաւ անգամ փափաք յայտնեցին խմբագրութեանս, որ՝ ինչպէս ժամանակաւոր այլ և այլ կարեւոր և օգտակար օտարազգի յոդոր հաւաքածոյ կը հրատարակէր Բազմավէպն, սոյնպէս այժմ՝ փոխանակ միայն օտար յոդոց՝ հաւաքէր մեր ազգային թերթից պարոտնակութենեն ինչ ինչ մասեր։

Այդ գիշանալով այդպիսի գովելի փափաքի մը, ներկայ թերթս կը սկսինք հանդէս հանդիսից տիտղոսով հետեւեալ տեղեկութիւնքը քաղել։

---

1. Այս այն երիտասարդն է՝ որոյ հանճարոյն կանխահաս փիլիսոփաները տեսնելով Զմիւռնիոյ Ազգային՝ հանգանակութիւն բերին ու՝ գրին զինքը Մուրատ-Ռափայէլեան վարժարանը, և տարուէ տարի կը յղեն իրենց հանգանակութեան պաուղը։

digitised by A.R.A.R.@